

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 4

«ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐՁԵՏՈՐԱՐՈՒՄԻ ՆԻՍՏԻ»

02 դեկտեմբերի 2010թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և ներկայացուցիչ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունից /վարչական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Օհանյան/:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների կողմից 2010 թվականի բյուջեների սեփական եկամուտների ընթացիկ հավաքագրման և առկա խնդիրների մասին:
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարոյան/
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից բխող գործընթացների իրականացման ընթացքի և առկա խնդիրների մասին:
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լ. Հարությունյան/
3. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010թ. ապրիլի 27-ին ընդունված «Հարկերի մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունների, ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի «Արտավայրերի և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477- Ն որոշման և դրանցից բխող գործառույթների մասին:
/Զեկուցողներ՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կ. Կոզմանով, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մ. Կոստանդյան/
4. Համայնքներում արտակարգ իրավիճակների ժամանակ տեղական ինքնակառավարման մարմինների առանձին խնդիրների մասին:
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Ս. Ավետիսյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «Մարզի համայնքների կողմից 2010 թվականի բյուջեների սեփական եկամուտների ընթացիկ հավաքագրման և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարոյանը:

Օրակարգի երկրորդ՝ ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից բխող գործընթացների իրականացման ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լյուդվիգ Հարությունյանը:

Օրակարգի երրորդ՝ «ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010թ. ապրիլի 27-ին ընդունված «Հարկերի մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունների, ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի «Արտավայրերի և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477- Ն որոշման և դրանցից բխող գործառույթների մասին» զեկուցումներով հանդես եկան՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կառլեն Կոզմանովը, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մուշեղ Կոստանդյանը:

Օրակարգի չորրորդ՝ «Համայնքներում արտակարգ իրավիճակների ժամանակ տեղական ինքնակառավարման մարմինների առանձին խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Սեյրան Ավետիսյանը:

Զեկուցումների շուրջ ելույթներով հանդես եկան Սյունիք գյուղական համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանը և Նոնաձոր գյուղական համայնքի ղեկավար Մկրտիչ Մկրտչյանը: /Կցվում են զեկուցումներն ու ելույթները/:


Հայտարարությամբ հանդես եկավ Կապան համայնքի ղեկավար Արտուր Աթայանը:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ հանձնարարվեց համայնքների ղեկավարներին ամենայն պատասխանատվությամբ և ամենասեղմ ժամկետներում միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից 2010թ. բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ապահովման վրա և խնդրին վերստին անդրադառնալ 10 օր հետո:

Աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մ. Կոստանդյանին հանձնարարվեց Կապանի քաղաքապետարանի և Սյունիքի գյուղապետարանի հետ ուսումնասիրել քաղաքային նոր գերեզմանատեղի ընտրության հարցը և ներկայացնել առաջարկություն:

ՀՀ Սյունիքի մարզպետ

 Ս. Խաչատրյան